

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵՋՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՍԿԶՐԱՎՈՐՄԱՆ:
ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (XI—XIX ԴԱՐԵՐ)

Ա. Կ. ԲԱՐԵՋԻՋՅԱՆ

Հայ-ֆրանսիական լեզվամշակութային կապերը բազմադարյան պատմությամբ ունեն։ Ֆրանսիացիների հետ հայերի անմիջական շփումներն սկսվում են XI դարի վերջերին, խաչակրաց առաջին արշավանքների ժամանակ, երբ Կիլիկյան Հայաստանում հաստատվել էր Ռուբինյանների հայկական դահաժողովրդը։

Սակայն հիշատակումներ կան այն մասին, որ առանձին շփումներ եղել են նաև նախորդ ժամանակաշրջանում, մինչև Ֆրանսիայի՝ որպես ինքնուրույն պետություն կազմավորվելը (IX դար)։ VI դարում հայերն արդեն գնում էին Գալիա։ Ֆրանկների պատմիչ Գրիգոր Տուրացին Grégoire de Tours.. 538—594) արձանագրում է, որ 591 թ. Տուր (Tours) քաղաքում կար Սիմոն անունով մի հայ եպիսկոպոս¹։ Իսկ ֆրանսիացի ճանաչված հայագետ Օգյուստ Կարիերը 1886-ին Փարիզում հրատարակում է IX դարի վերջերին կամ X դարի սկզբներին վերագրվող լատիներեն-հայերեն մի բառացանկ (L'ancien glossaire latin-arménien)²։ Հայտնաբերված Ֆրանսիայի Օտուն (Autun) քաղաքի եկեղեցական դպրոցի մատենադարանում³։

XI դարում կազմավորվում է Կիլիկիայի Հայկական պետությունը և գոյատևում մոտ երեք դար (1080—1375)։ Մեր խնդիրը չէ անդրադառնալ նրա պատմությանը և շարադրել երկրի պետական կարգի, կրոնի, գիտության, մշակութի ու արվեստի մանրամասն նկարագրությունը։ Ուսումնասիրվող կյուրթի տեսանկյունով կարևոր է այն փաստը, որ հայ-ֆրանսիական կապերի կիլիկյան շրջանին բնորոշ է եղել հասարակական-տնտեսական կյանքի ծաղկումը բոլոր ասպարեզներում։ Եվրոպական քրիստոնեական պետությունների կողքին Արևելքում երևան էր եկել հայկական՝ նույնպես քրիստոնեական մի պետություն, որի իշխան Լևոն II-ը 1198-ին հայոց թագավոր էր օծվել Գերմանիայի Հենրիկոս (Հայերի) VI կայսեր, Բյուզանդիայի Ալեքսանդր III Անգելոս կայսեր և Հռոմի պապի ներկայացուցիչների կողմից։

Կիլիկյան Հայաստանը, որ զարգացած ավատատիրական պետություն էր, սոցիալ-քաղաքական, առևտրական ու մշակութային կապերի մեջ էր մի շարք երկրների հետ, որոնցից մեկն էլ Ֆրանսիան էր։ Բացառիկ իրավունքներով օժտված հայոց թագավորը դեսպաններ էր առաքում տարբեր պետություններ, այդ թվում՝ Ֆրանսիա։ Կիլիկիա էին հրավիրվում ֆրանսիացի, իտալացի, գերմանացի և անգլիացի պաշտոնյաներ, զորավարներ, դատավորներ, ասպետներ, վաճառականներ։ Քաղաքական ու կրոնական նկատառումներով ֆրանսիացիներն իրենց դիվանագիտական ներկայացուցիչներն ու հոգևոր կենտրոններն ունեին այստեղ, որոնց ծավալած գործունեության շնորհիվ լատինական մշակույթը թափանցեց Կիլիկիա և, փոխադարձաբար, հայոց լեզուն ու գրականությունը աստիճանաբար մուտք գործեցին Ֆրանսիա։ 1322-ին Ավինյոնի քահանայապետաց արքունիքում Լևոն V թագավորի կողմից ուղարկված ուսուցիչները հայերեն էին ավանդում⁴։

¹ F. Macler. Autour de l'Arménie. Paris, 1917. p. 44.

² M. Djanachian. Les Arménistes et les Mékhitaristes. Armeniaca. Mélanges d'études arméniennes. Saint-Lazare, Venise, 1869, p. 383.

³ F. Macler. Op. cit., p. 10.

Կիլիկյան Հայաստանի աշխարհագրական բարենպաստ դիրքն ու բնական հարստությունները հատկապես խթանում էին առևտրական կապերն այլ երկրների հետ: Հայերի կողքին այնտեղ ապրում և առևտուր էին անում տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց մեջ քիչ չէին ֆրանսիացիները: Կային հայ թագավորներից վասալական կախման մեջ գտնվող խաչակիր ֆրանկ ասպետներ: Սերտ առևտուր էր հաստատվել մասնավորապես ֆրանսիական Մոնպելյե, Նիմ և Մարսել քաղաքների հետ:

Կիլիկիայի միջնակարգ և բարձրագույն դպրոցներում ուսուցանվում էին բազմաթիվ առարկաներ: Հատուկ ուշադրություն էր նվիրվում օտար լեզուների դասավանդմանը, որի նպատակներից մեկը թարգմանիչներ և դիվանագիտական գործիչներ պատրաստելն էր: Գրագրությունները երկրում կատարվում էին կիլիկյան միջին հայերենով, որը պետականության շնորհիվ բարձրացել էր գրական լեզվի աստիճանի, իսկ օտար պետությունների հետ՝ օտար լեզուներով: Հայ մտավորականները քաջատեղյակ էին մի շարք լեզուների, որի շնորհիվ ոչ միայն ուսումնասիրում, թարգմանում ու մեկնաբանում էին այլազգի հեղինակների արժեքավոր երկերը, այլև շարադրում իրենց աշխատասիրությունները: Այսպես, Հեթում պատմիչը 1307-ին Կղեմես V պապի հանձնարարությամբ շարադրում է թաթար-մոնղոլների պատմությունը՝ միջնադարյան ֆրանսերենով, որն այնուհետև վերածվում է լատիներենի, իսկ ավելի ուշ նաև թարգմանվում արդի ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հոլանդերեն, իսպաներեն: Աշխատությունն իր ժամանակին և հետագայում կարևորագույն տեղեկատու ձեռնարկ է եղել Արևելքի շուրջ տամաշուս երկրների քաղաքական ու տնտեսական կյանքի, աշխարհագրության, ժողովուրդների կենցաղի, սովորույթների ու մշակույթի մասին:

Ահա թե ինչ է գրում միջնադարյան Կիլիկյան Հայաստանի մասին Հ. Աճառյանը. «Այս բոլոր հարաբերությունները, եվրոպական դադուքները, պաշտոնյաների բազմությունը և այլն, չէին կարող առանց ազդեցության մնալ հայ կյանքի վրա: Ժամանակակիցները խոսում են երեք տեսակ նոր փոփոխության մասին, որ ուղղակի եվրոպացուց ազդեցության արդյունքն էին, այն է՝ կրոնական ու ծիսական նորամուծություններ՝ կաթոլիկ եկեղեցու համաձայն, եվրոպական տարազ և արդուզարդ, եվրոպական ավատական վարչաձև ու պաշտոններ»⁴:

Բնական է, որ նշված փոփոխությունները չէին կարող իրենց հետքը չթողնել նաև հայոց լեզվի, մասնավորապես նրա բառապաշարի վրա: Այն ժամանակից ավանդված գրավոր տեքստերում, հիմնականում դիվանական ու պատմական բնույթի, հանդիպում են բազմաթիվ օտարամուտ բառեր, այդ թվում՝ ֆրանսերեն, որոնցից շատերի համարժեքները հայերենում կային, մի հանգամանք, որ հետագայում դրանց մեծ մասի չգործածվելու գլխավոր պատճառներից մեկը եղավ:

Հ. Աճառյանը բառարաններից և տպագիր ու ձեռագիր զանազան աղբյուրներից հավաքել է եվրոպական լեզուներից միջին հայերենի փոխառած բառերը և ներկայացրել իր «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում: Դրանց մեջ ֆրանսիական փոխառությունների թիվը 70 է (էջ 299—301): Հ. Աճառյանը գտնում է, որ այդ բառացանկը չպետք է կատարյալ համարել, քանի որ մեկ մարդու ուժերից վեր է ուսումնասիրել տարբեր վայրերում ցրված ամբողջ գրականությունը և, բացի այդ, ճշգրիտ գրականությունը, ինչպես ամեն մի գրականություն, չի կարող լեզվի լրիվ պատկերը լինել, և անշուշտ բոլոր եվրոպական փոխառությունները նրա մեջ ավանդված չեն»⁵: Հ. Աճառյանի բառացանկը որոշ լրացումներով տեղ է գտել հեղինակային խմբի ուժերով ստեղծված «Անկարկներ միջին գրական հայերենի պատմության» երկհատոր ուսումնասիրության մեջ: Այստեղ ֆրանսե-

⁴ Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. II մաս, Երևան, 1951, էջ 303:

⁵ Նույն տեղում, էջ 299:

րենից փոխառված բառերի թիվը 96 է⁶։ Դրանք վերաբերում են պետական ու հասարակական կյանքին, պաշտոնավարությանը, կրոնին, իրավագիտությանը, առևտրին, կենցաղին։

Անդրադառնալով միջին գրական հայերենում հունարեն, լատիներեն, իտալերեն և ֆրանսերեն բառերի գործածությանը, Մ. Մուրադյանը նշում է. «Այս փոխառություններից գործածության հաճախությամբ հատկապես աչքի են ընկնում ֆրանսերեն բառերը, թեև դրանց թիվը մեծ չէ։ Կարելի է ենթադրել, որ ֆրանսերեն բառերի զգալի մասը ներթափանցել է խոսակցական լեզվի միջոցով, մանավանդ, եթե հիշենք, որ ավանդական մի բառ բացատրելիս հեղինակը կարող է դիմել նրա ֆրանսերեն համարժեքին՝ իրեն ավելի ընդունված բառի. օր. Վճարն կրկին լինի, որ է տուպլ»⁷։

Ֆրանսերեն բառերի գործածության հաճախությունը հաստատում է միջին հայերենում դրանց տարածված լինելը։ Որոշ բառեր ժամանակին այնքան սովորական և ընդունելի էին, որ ունեին նաև ածանցյալ ձևեր և նույնիսկ բարդություններ էին կազմում՝ քրինձ-իշխան (prince), բրնձութին-իշխանություն, կալօփ-ձիու վազք (galop), կալօփցնել-ձիուն վազեցնել, մարգիգ-բարձրաստիճան ազնվական տիտղոս, իշխանական աստիճան (marchis)՝ մարդիզուծի, մարգիզուհի, պարոն-ազնվական պատվանուն (baron), պարոնութիւն, պարոնանալ, պարոնորդի, պարոնիկ, պարոնպապ, պարոնամայր և այլն։ Ինչ վերաբերում է փոխառությունների՝ խոսակցական լեզվի միջոցով գրավոր լեզու թափանցած լինելուն, ապա դրա ապացույցը ֆրանսերեն բառերից շատերի հնչյունափոխված տեսքն է հայերենում, ինչպես նաև որոշ զուգահեռ ձևերի գոյությունը. օր. գունթ, գունդ, գունթ, գունց, գունս, գունդ-կոմս (comte)։

Լևոն II-ի թագադրումից հետո Հռոմն սկսել էր պահանջել, որ հայ եկեղեցին ճանաչի իր գերիշխանությունը և միանա կաթոլիկ եկեղեցուն։ Հայոց արքունիքը հակված էր այդ միությանը և ջանում էր նպաստել դրան։ Սակայն իշխանությունների լատինամետ դիրքորոշումն առաջացնում էր ժողովրդական զանգվածների դժգոհությունը, որոնք հավատարիմ էին հայ եկեղեցու անկախությանն ու նրա վարդապետական ուսմունքի անձեռնմխելիությանը։ Հետագայում այդ հակասությունը հայոց պետության թուլացման պատճառներից մեկը դարձավ։

Կիլիկյան թագավորության անկումից հետո (1375 թ.) Հռոմը չդադարեց հետամուտ լինել Արևելքում կաթոլիկություն տարածելու ծրագրի իրագործմանը։ «Ֆրանսիան՝ կաթոլիկ եկեղեցու ավագ ղուստորը»⁸, հավատարիմ լինելով խաչակրաց արշավանքներով սկզբնավորված «ղեպի Արևելք» շարժումների ավանդույթներին, միաբան էր Հռոմին և նրա օրինակով իր հատուկ քարոզիչներն էր առաքում Հայաստան, որոնք նախապես հայերեն էին ուսումնասիրում՝ այդ նպատակով կազմված ընթերցարանների, քերականության ձեռնարկների ու բառարանների օգնությամբ։ Ինչպես Իտալիայում, այնպես էլ Ֆրանսիայում հայոց լեզվի իմացությունը խրախուսելու ուղղությամբ լայն ու նպատակասլաց գործունեություն ծավալվեց, մանավանդ կարդինալ Ռիշելիեի օրոք, որը Լյուդովիկոս XIII-ին առաջարկեց կազմել տալ և արքունական տպարանում լույս ընծայել հայերեն գրքեր։ Ռիշելիեի հրամանով ու ծախսերով Ֆրանսիայում հայերեն տառեր ձուլվեցին, և 1633-ին Փարիզում տպագրվեց ու անվճար բաշխվեց Ֆրանսիայում լույս տեսած հայերեն առաջին տպագիր գիրքը՝ Ֆրանչիսկո Ռիվոլայի հայերեն-

⁶ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. հ. Ա, Երևան, 1972, էջ 293—295։

⁷ Նույն տեղում, էջ 245։

⁸ G. D'Esolf. Aperçu de l'étude de la langue arménienne en Europe, 1890, p. 4.

լատիններեն բառարանը⁹, որից հետո հրատարակվեց նաև նույն հեղինակի ռուսական քերականությունը:

Սակայն սխալ կլիներ կարծել, թե կարգինալ Ռիշելիեի գործունեությունը միայն կրոնական նպատակներ էր հետապնդում: Նա խրախուսում էր արևելեագիտական ուսումնասիրությունները Ֆրանսիայում՝ Արևելքում Ֆրանսիական ազդեցությունն ամրապնդելու համար: Ռիշելիեն մտահղացավ Ֆրանսիայում հայեր բնակեցնելու և նրանց օգնությամբ առևտուրն ընդարձակելու ծրագիրը, որի իրագործումը շարունակվեց նրան հաջորդած կարգինալ Մազարինիի օրոք: Վերջինս դիմեց Լյուդովիկոս XIV-ին Մարսելում հայկական համայնք հիմնելու առաջարկով և պնդեց, որ այն ընդունվի: XVII դարի երկրորդ կեսին հայերի թիվը Մարսելում զգալիորեն ավելացավ՝ ի հաշիվ իտալական Զենովա և Լիվոռնո քաղաքների հայ բնակիչների: Ռիշելիեն, Մազարինին և Լյուդովիկոս XIV-ը իրենց գործունեությամբ ոչ միայն նպաստեցին, այլև ուղղակի Ֆրանսիա ձգեցին հայերին, որոնց հանդեպ եղած համակրանքը հարատևեց Լյուդովիկոս XV-ի, Լյուդովիկոս XVI-ի ու Նապոլեոն Բոնապարտի օրոք, և որի գերագույն արտահայտությունը դարձավ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզվի ամբիոնի հիմնադրումը:

Այսպիսով, հեռկիլիկյան շրջանում սկիզբ առավ հայոց լեզվի շահագրգիռ ուսումնասիրումը Հռոմում և Փարիզում՝ նախ և առաջ կրոնական նպատակներով, որից հետո հայ-ֆրանսիական կապերը զնալով ծավալվեցին՝ աստիճանաբար ընդգրկելով նորանոր բնագավառներ: XV—XVIII դդ. Ֆրանսիայում ստեղծվեցին հայկական գաղթօջախներ, հիմնականում երկու խոշորագույն քաղաքներում՝ Մարսելում և Փարիզում: Հայ պետականության բացակայության պայմաններում առաջնային դարձավ մշակույթի բնագավառը: Գիտական հետազոտությունների ասպարեզում կարևորագույն տեղ զբաղեցին աստվածաբանական, պատմական և բանասիրական ուղղությունները:

XVI դարի նշանավոր արևելագետ ու հայտնի ճանապարհորդ Գիյոմ Պոստելը (1510—1581) 1538-ին Փարիզում լույս ընծայեց 75 չհամարակալված էջերից բաղկացած մի գիրք, ուր իր դիտողություններն էր շարադրում տասներկու լեզուների, այդ թվում՝ հայերենի վերաբերյալ, որին հատկացրել էր հինգ էջ¹⁰:

1672-ին Լյուդովիկոս XIV-ի օժանդակությամբ Մարսելում հիմնադրվեց Ֆրանսիայում գործող առաջին հայկական տպարանը, որտեղ լույս տեսան տասնվեց գրքեր: Դրանց մի մասն առաքվեց նաև այլ երկրներ, մասնավորապես Անգլիա և Հոլանդիա, ուր հայկական գաղթօջախներ կային: Այդ գրքերը նպաստեցին հայ գրականության ու հայոց լեզվի ճանաչմանն ու տարածմանը:

XVII—XVIII դդ. Հայաստանն ու հայոց լեզուն սկսեցին ավելի ու ավելի գրավել եվրոպացիների ուշադրությունը: Ֆրանսիացի հայագետ Ժակ Վիյոտը (1656—1743) 1714-ին Հռոմում հրատարակեց շուրջ 26 000 բառահոգոված պարունակող լատիններեն-հայերեն բառարան, իսկ Մաթյուրեն Լա Կրոզը (1661—1739) տասներկու տարի աշխատելով կազմեց հայոց լեզվի երկհատոր մի բառարան, որն անտիպ մնաց: Լա Կրոզը եվրոպացի առաջին գիտնականներից էր, որ զբաղվեց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ուսումնասիրությամբ, իսկ հայերեն Աստվածաշունչը գնահատեց որպես թարգմանությունների թագուհի: Դրեց «Քրիստոնեության պատմությունը Հարեշտանում և Հայաստանում» աշխատությունը (1739), թարգմանեց Մես-

⁹ Բառարանն առաջին անգամ հրատարակվել էր 1621-ին Միլանում, որը նաև հայերեն առաջին տպագիր բառարանն էր և ամփոփում էր մոտ 11 000 բառ: Տե՛ս Գ. Կ. Քառեղիզյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1988, էջ 48—51:

¹⁰ P. Macler. Op. cit., p. 10.

րոպ Երևցի «Պատմութիւն մնացորդաց հայոց և վրաց» գործը, Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» պոեմը և այլն:

Լա Կրոդին հաջորդած հայագետներից հիշատակության է արժանի Գ. Վիլ-ֆրուան (1690—1777), որը գիտելիքների խորիմացությամբ գերազանցեց նախորդներին: Նվիրվեց Աստվածաշնչի թարգմանությունների համեմատական ուսումնասիրությանը և ցանկացավ անպայման ընդգրկել նաև հայերեն տարբերակը: Մի քանի տարում գրաբար սովորեց, իսկ 1739-ին լույս տեսավ Փարիզի Արքունի մատենադարանի (հետագայում՝ Փարիզի Ազգային գրադարան) հայերեն ձեռագրերի երկու ցուցակ՝ դրանց մանրամասն նկարագրությամբ: Գ. Վիլֆրուան կապ հաստատեց Մխիթարյան հայրերի հետ, ստացավ նրանց խորհուրդներն ու վեներաբլի տպարանում լույս տեսած հայերեն գրքերը, որոնցով հարստացրեց Արքունի մատենադարանը: Մխիթարյանների օգնությամբ շարունակվեց ու հետագայում ավելի հաճախակի դարձավ՝ նպաստելով հայագիտությանն ամբողջ Եվրոպայում:

Գ. Վիլֆրուայի աշակերտ Պիեռ Դյու Ֆուրը (ծն. թ. անհայտ—1789) 1749-ի օգոստոսին նամակով դիմեց Մխիթարյան միաբանության հիմնադրին՝ խնդրելով տեղեկություններ հաղորդել Մովսես Լուսինացու «Հայոց պատմության» պատմագիտական արժեքի մասին, որպեսզի կարողանա այլ նշանավոր երկր պաշտպանել հեղինակի շարադրանքի ճշմարտացիությունը կուսակցի տակ դնող քննադատներից: Ֆրանսիացի հայագետին ստիպված եղան պատասխանել Մխիթար Սեբաստացու աշակերտները, քանի որ նույն թվականի ապրիլին Աբբահայրն արդեն վախճանվել էր:

Վիլֆրուայի աշակերտներից Սիմոն-Պիեռ Լուրդեն (1729—1799) քսան տարի նվիրեց հայերենի ուսումնասիրությանը և տասնչորս տարի՝ հայոց լեզվի բառարան կազմելուն: Հայերենը կատարելագործելու և իր աշխատությունները սրբագրելու նպատակով 1785-ին մեկնեց Վենետիկ, որ մնաց մեկ և կես տարի՝ աշակերտելով Ստեփանոս Ազունցին (հետագայում միաբանության արքայապետ ու արքեպիսկոպոս): Աստվածաշունչը հայերենից փոխադրեց լատիներեն՝ եբրայերենի և հունարենի համեմատությամբ ու ծանոթագրություններով: Նրա հայ-լատիներեն ընդարձակ բառարանը, որի ձեռագիրը պահվում է Փարիզի Ազգային գրադարանում, մնաց անտխա:

Հայերենի գիտական ուսումնասիրության և՛ այս ճանապարհով հայոց պատմությունը, գրականությունն ու մշակույթը եվրոպացիներին ներկայացնելու գործում կարևորագույն ու շրջադարձային նշանակություն ունեցավ 1798 թ. աշնանը Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզվի ամբիոնի հիմնադրումը, որով հայագիտությունը պաշտոնական կարգավիճակ ձեռք բերեց Ֆրանսիայում: Հայերենի դասավանդումը ժամանակավորապես մտցվեց դպրոցի ծրագրի մեջ և հանձնարարվեց Շահան Հակոբ Զրպետյանին (Զրպետ, 1772—1837): 1801-ին այն ընդհատվեց և վերականգնվեց 1811-ին, քսան ունկնդիրներից բաղկացած խմբի համար, որոնց մեջ էր ապագա ճանաչված հայագետ Սեն-Մարտենը¹¹:

Հայոց լեզվի ամբիոնի ստեղծումը մեծ արձագանք գտավ Արևելքում, և հայերենի դասավանդումը մի նոր ապացույց դարձավ այն հետաքրքրության, որ տաժում էր Ֆրանսիան Արևելքի ժողովուրդների և մասնավորապես՝ հայերի նկատմամբ, որոնք հոժարակամ դեպի Եվրոպա էին շրջում իրենց հայացքը¹²: Ֆրանսիայում հայագիտությունը հասավ մի նոր աստիճանի: Ան-

11 Գ. Ա. Շրուամպ. Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յարևմտու (ԺԳ—ԺԹ դար), թրգմ. լրց. Գ. Զարհանալան. Վենետիկ, 1895, էջ 105—129:

12 Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում հայոց լեզուն դասավանդվում է առ այսօր: Ավելորդ չենք համարում հիշատակել այն գիտնականների անունները, որոնք պաշտոնավարել են ամբիոնում. Շահան Զրպետյան (1798—1801 և 1810—1826), Լըվայան դը Ֆլորիվալ (1826—1862), Էդուարդ Դյուվորիե (1862—1881), Օգյուստ Կարիեր (1881—1902), Անտուան-

տուան ժան Սեն-Մարտենը (1791—1832) քսան տարեկան հասակում արդեն գիտեր հայերեն։ Թարգմանեց Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Նղիշի և այլոց գործերը։ Սեն-Մարտենին գիտական համբավ բերեց նրա «Պատմական և աշխարհագրական հիշատակություններ Հայաստանի մասին» երկ-հատոր աշխատությունը¹³։ 1822-ին Ա. Շեգրի, Ա. Ռեմյուզայի, Մ. Բրոսսեի

և այլոց հետ հիմնեց La Société Asiatique ընկերությունը և «Journal Asiatique» հանդեսը, որտեղ բազմաթիվ հայագիտական ուսումնասիրություններ տպագրվեցին։ Սեն-Մարտենին հաջորդեց Լըվայյան դը Ֆլորիվալը (1800—1862), որը Շ. Զրպետյանին աշակերտելուց բացի, նաև փոխարինեց իրեն՝ դրանով իսկ սկիզբ դնելով հայոց լեզվի դասավանդմանը հենց ֆրանսիացիների կողմից։ 1834-ին Լըվայյան դը Ֆլորիվալը մեկնեց Վենետիկ՝ գիտելիքները կատարելագործելու։ 1836-ին և 1841-ին հրատարակեց Խորենացու «Հայոց պատմություն» ֆրանսերեն թարգմանությունը, երկրորդը՝ գրաբար բնագրի հետ։

XIX դարում ասպարեզ մտավ ֆրանսիացի հայագետների մի ամբողջ համաստեղություն, որոնց կյանքի ու գործունեության մանրամասները հնարավոր չէ ներկայացնել սույն հոդվածի սահմաններում։ Այդ գիտնականների աշխատությունների համառոտ թվարկումն իսկ տասնյակ էջեր կզբաղեցներ։ Ուստի, կբավարարվենք ամենակարևոր անունները, փաստերն ու գործերը նշելով միայն։

Հայոց լեզվի, հնագիտության, պատմության, աշխարհագրության և ժամանակագրության բազմաթիվ հարցեր լուսաբանեց արևելագետ Մ. Բրոսսեն (1802—1880)։ 1845-ին այցելեց Վենետիկ, ծանոթացավ Գ. Այվազովսկու, Պ. Ալիշանի և ուրիշների հետ, զբաղվեց ձեռագրերի ուսումնասիրությամբ։ Հայագիտության տարածմանը մեծ նպաստ բերող նրա նշանավոր գործերից է հայ պատմագիրների Թովմա Արծրունու, Մխիթար Այրիվանեցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավազի, Աբրահամ Կրետացու և այլոց երկերի թարգմանությունը, որ երկու հատորով ու ընդարձակ ծանոթագրություններով հրատարակվեց Պետերբուրգում¹⁴։

Կիլիկյան Հայաստանի և հայ դրամագիտության մասին մի շարք մնացյալ աշխատություններ գրեց Վիկտոր Լանգլուան (1829—1869)։ 1852—53-ին ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ մեկնեց Կիլիկիա և Փոքր Հայք՝ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի հայ-ֆրանսիական հարաբերությունների վերաբերյալ նյութեր հավաքելու։ Հայ պատմագիրներ Փավստոս Բուղանդի, Կորյունի, Խորենացու, Նղիշի, Ղազար Փարպեցու և այլոց երկերի՝ իր կատարած թարգմանություններից կազմված ժողովածուի առաջաբանում Վ. Լանգլուան գրում է. «Հայ գրականությունը, որ քրիստոնեական Արևելքի ամենահարուստ ու ամենահետաքրքիր գրականություններից մեկն է, կես դար է միայն, ինչ սկսել է լրջորեն գնատուվել նվիրյալում։ Մինչ այդ, XVII դարում Ժ. Վիյոտի և Լա Կրոզի, իսկ հաջորդ դարում Վիլֆրուայի, Շրյոդերի և Ուինստոն եղբայրների ձեռնարկումներն արգասավոր չեն եղել։ Մխիթար Սեբաստացու կողմից 1715-ին Վենետիկում հիմնադրված և կրոնական, ազգային ու գրական մեկ ընդհանուր նպատակ հետապնդող Սուրբ Ղազարի Միաբանությունը կարողացավ հայա-

Մեյն (1902—1906), Ֆրեդերիկ Մակլեր (1906—1937), Ժորժ Դյուվեզիլ (1937—1949), Ֆրեդերիկ Ֆելդի (1949—1977), Ժան-Պիեռ Մահե (1977-ից մինչև օրս)։

¹³ Antoine Jean Saint-Martin. Mémoires historiques et géographiques sur l'Arménie. T. 1, Paris, 1818, t. 2, Paris, 1819.

¹⁴ M. Brosset. Collection d'historiens arméniens, T. 1, St. Pb., 1874, t. 2, St. Pb., 1876.

դիտական ուսումնասիրություններին մեծ թափ հաղորդել, որը շոշափելի արդյունք ունեցավ Եվրոպայում, մանավանդ՝ մեր դարասկզբին»¹⁵։

Գերմանացի, անգլիացի, բելգիացի, հոլանդացի, իտալացի հայագետները նույնպես սերտ կապեր հաստատեցին Մխիթարյան միաբանության հետ։ Եվրոպացի գիտնականներից շատերն ընտրվեցին Սուրբ Ղազարի Ակադեմիայի անդամներ։ Սիմոն Լուրդեն՝ 1787-ին, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Նեյմանը՝ 1828-ին, Լըվայյան դը Ֆլորիվալը՝ 1834-ին, Էժեն Բորեն՝ 1835-ին, Էդուարդ Դյուլոնը՝ 1853-ին, Վիկտոր Լանգլուան՝ 1861-ին և ուրիշները նրանցից էդ. Դյուլոնին (1807—1881) հայերեն էր սովորել հենց Մխիթարյանների մոտ։ 1850-ին նա ֆրանսերեն թարգմանեց խաչակրաց առաջին արշավանքի մասին Մատթեոս Ուոհայեցու տեղեկությունները՝ ըստ Մխիթարյան միաբանության մատենադարանում և Փարիզի ազգային գրադարանում պահվող ձեռագրերի։ Շուտով, ամենահեղինակավոր պարբերականներն ու գիտական ժողովածուները սկսեցին տպագրել նրա մի շարք ուսումնասիրությունները՝ նվիրված մասնավորապես հայ պատմագիրների աշխատություններին, ֆրանսերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով։

Վերոհիշյալ գիտնականներից բացի իրենց աշխատություններով աչքի ընկան ֆրանսիացի հայագետներ Օգյուստ Կարիերը (1838—1902), Էժեն Բորեն (1809—1878), Ժոզեֆ Գատերիասը (1855—1883) և ուրիշներ։

XIX դարում Ֆրանսիայում հրատարակվում էին պատմաբանասիրական մի շարք պարբերականներ¹⁶, որոնցում տպագրվում էին նաև հայագիտական արժեքավոր հետազոտություններ։

Ֆրանսիայի հեղինակությունն անցյալ դարում այնքան մեծ էր Արևելքում, որ հայ երիտասարդները, հիմնականում Արևմտյան Հայաստանից, այստեղ էին դալիս ուսանելու և հաղորդակցվելու ֆրանսիական քաղաքակրթությանը, որի ջատագովներն էին դառնում հայրենիք վերադառնալուց հետո։ XIX դարը նշանավորվեց որպես հայ մշակույթի բուռն վերելքի ժամանակաշրջան, իսկ «Փարիզն իր հեղափոխական ավանդույթներով ու ազդեցություններով XIX դարասկզբին դարձավ հայ ուսումնատենչ երիտասարդության հավաքատեղին, միաժամանակ վերածվելով հայկական տպագրության, մամուլի, հրապարակախոսության, լուսավորության յուրահատուկ մի կենտրոնի»¹⁷։

1846-ին Փարիզ տեղափոխվեց ականավոր մանկավարժ Սարգիս Թեոդորյանի ջանքերով 1834-ին Իտալիայի Պադուա քաղաքում հիմնված Մուրադյան վարժարանը, որը կրթական պատշաճ մակարդակ էր ապահովում։ Մրցանակների ամենամյա բաշխումն ուսումնական այս հաստատությունում կատարվում էր մեծ շուքով, և ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Ալֆոնս դը Լամարթինը, որ նաև Արտաքին գործերի նախարար էր (1848—1851 թթ.), ներկա էր լինում այդ արարողություններին և հանդիսաճառ արտասանում։

Փարիզի հայ համայնքը գնալով աճեց ու ամրացավ։ XIX դարի կեսերից սկսվեց մի շարք հայ պարբերականների հրատարակումը. Փարիզում, Մարսելում և Մոնպելիեում. «Արևելք» (1855), «Մասյաց աղավնի» (1855), «Արևմուտք» (1859), «Փարիզ» (1860), «Մաղկոցաձոր» (1861), «Արմենիա»

¹⁵ V. Langlois. Collection des historiens anciens et modernes de l'Arménie. T. 1, Paris, 1867, t. 2, Paris, 1869.

¹⁶ Revue des deux mondes, Journal des savants, Journal Asiatique, Revue orientale, Revue archéologique, Revue de l'Orient, l'Univers catholique, Revue critique internationale, Revue d'Histoire ecclésiastique, Muséon և այլն։

¹⁷ Վ. Երկանյան. Հայկական մշակույթը, 1800—1917 թթ., Երևան, 1982, էջ 17։

(1885), «Հնչակ» (1887), «Անահիտ» (1898), «Բանասեր» (1899), «Համալսարան» (1899)¹⁸։

XIX դարում է, որ ստեղծվեցին ֆրանսերեն-հայերեն ու հայերեն-ֆրանսերեն առաջին բառարանները։ Թարգմանական բառարանագրությունը դարձավ հայ մշակութային կյանքի անբաժանելի մասն ու բազմադյուն ոլորտներից մեկը։ Հարուստ Ավգերյանի, Սրապիոն էմինյանի, Նորայր Բյուզանդացու, Սամվել Գանթարյանի, Մեսրոպ Նուպարյանի, Մանվել Քաչունու, Եղիա Տեմիրճիպաշյանի, Սիմոն Երեմյանի, Գվիդոն Լուսինյանի ֆրանս-հայերեն և հայ-ֆրանսերեն բառարաններից յուրաքանչյուրն արժանի ու մրասալուն տեղ գրավեց հայ բառարանագրության պատմության մեջ։

Գործունեության մյուս ասպարեզը, որ զարմացնում է իր չափերով ու ընդգրկումով, թարգմանական գրականությունն է՝ ֆրանսերենից հայերեն։ Գեղարվեստական երկերի թարգմանությունը աննախագեղ չափեր ընդունեց՝ նպաստելով գրական ճաշակի ու գործընթացի զարգացմանը։

Բառարանագրության ու թարգմանական գրականության շնորհիվ հազարավոր ֆրանսերեն բառեր, կայուն բառակապակցություններ և առանձին իմաստներ պատճենվեցին հայերեն, ավելի քիչ թվով բառեր՝ փոխառվեցին։ Ֆրանսերենի ազդեցությամբ ու հետևություններով հայոց լեզվում ի հայտ եկած բառամիավորներից շատերը, որպես անհրաժեշտ ու պիտանի միավորներ, ամրացան ու դարձան հայ գրական լեզվի ընդհանուր սեփականությունը (օրինակ՝ բառախաղ, գաղափարախոս, գերմարդկային, երկաթուղի, կարգախոս, կենտրոնախույս և այլն)։

XIX դարում Փարիզում գործում էին մի շարք հայկական տպարաններ։ Հաջ-ֆրանսիական լեզվամշակութային կապերին վերաբերող տարբեր աղբյուրների ու վերոհիշյալ շարադրանքի ընձեռած նյութերը թույլ են տալիս սույն հոդվածն ամփոփել հետևյալ եզրակացություններով։

1. XI—XIX դդ. հայ-ֆրանսիական լեզվամշակութային կապերի պատմությունը կարելի է բաժանել երեք մեծ շրջանների. ա) կիլիկյան պետականության շրջան (XI—XIV դդ.), բ) հետկիլիկյան զարգացման շրջան (XV—XVIII դդ.) և գ) XIX դարն ու հատկապես նրա երկրորդ կեսը, որպես այդ կապերի ամրապնդման, ընդարձակման ու աննախագեղ ծավալման շրջան։

2. Հայերի հանդեպ ֆրանսիացիների ցուցաբերած հետաքրքրությունը ակզբնապես ուներ կրոնաքաղաքական ու առևտրական դրդապատճառներ։ Սակայն XVI դարից Հայաստանը, հայոց լեզուն ու գրականությունը աստիճանաբար դառնում են գիտական որոնումների և ուսումնասիրությունների առարկա։ Հայ պետականության բացակայության պայմաններում առաջ է մղվում մշակույթի բնագավառը։ Մեր ազգային մատենագրության լավագույն նմուշներն սկսում են ավելի ու ավելի գրավել ֆրանսիացի հայագետների ուշադրությունը, իսկ XVII—XVIII դդ. հրատարակված հայերեն առաջին դրքերն ու բառարանները նոր հետաքրքրություն են առաջացնում Եվրոպայում։

3. Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզվի ամբիոնի հիմնադրումը դիտական պատշաճ բնույթ է հաղորդում հայագիտական ու հայերենագիտական հետադոտություններին Եվրոպայում և նշանավորվում ֆրանսիացի հայագետների հետագա արժեքավոր աշխատություններով։ Տիրապետելով հայերենին, նրանք ուսումնասիրում են իրենց հետաքրքրող բնագրերը և ֆրանսերեն թարգմանում հայ գրականության, պատմության ու մատենագրության արժեքավոր նմուշներ։ Այսպիսով, Եվրոպայում ստեղծվում է հայագիտական մի ուրույն հենակետ, ուր հայերենի ուսումնասիրումն ու նրան տիրապետելը՝ Հայաստանի պատմության, աշխարհա-

¹⁸ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794—1967)։ Համահավաք ցանկ։ Պաշտոնական, Կիրակոսյան, Երևան, 1970։

գրութիւն, գրականութիւն ու մշակութի ալլեայլ խնդիրների վերաբերյալ բննախույզ պրպտումների ճանապարհ են հարթում ֆրանսիացի ե ալլազգի գիտնականների համար: Միաժամանակ չպետք է անտեսել այն փաստը, որ XIX դարի ֆրանսիական հայագիտութիւնը Փարիզի Արեւելյան կենդանի լեզուների դպրոցի հայոց լեզվի ամբիոնի դասախոսների մենաշնորհը չի եղել: Հայագիտական արժեքավոր հետազոտութիւններ են կատարել նաեւ այլ գիտնականներ:

4. Բարբերութիւնն եվրոպական մուտ երկրների, ուր հայագիտութիւնն առավելապէս զարգանում էր առանձին գիտնականների անձնական եռանդի ու ներքին մղումի շնորհիւ: Ֆրանսիայում առկա էր պաշտոնական նախաձեռնութիւն: Ֆրանսիական կառավարութիւնը ինքն էր խթանում հայերի հետ շփումներն ու հայագիտական ուսումնասիրութիւնները՝ ըստ այս կամ այն ժամանակաշրջանի առաջագրած պահանջների ու նպատակների:

5. Մխիթար Սեբաստացու կողմից XVIII դարի սկզբին հիմնադրված Մխիթարյան միաբանութիւնը հսկայական նպաստ է բերում հայագիտական հետազոտութիւններին ոչ միայն Ֆրանսիայում, այլեւ ողջ եվրոպայում: Միաբանութիւնն հրատարակած բազմաթիւ տեքստերը, քերականութիւններն ու բառարանները հայագիտութեամբ զբաղվելու բարենպաստ պայմաններ են ստեղծում եվրոպացի գիտնականների համար, որոնց շարքերում ֆրանսիացիներն ստանձնում են առաջամարտիկի դերը: Մխիթարյան հայրերի աշխատասիրութիւններն ու թարգմանութիւնները առատ նյութ ու նոր լիցք են հազորդում XIX դարի եվրոպական հայագիտութեանը, որի ներկայացուցիչները ոչ միայն դիմում են Մխիթարյանների օգնութեանը, այլեւ հարկ եղած դեպքում քննադատվում եւ ուղղվում նրանց կողմից:

6. XIX դարում ֆրանսահայ համայնքը զգալիորեն աճում է, իսկ հայ-ֆրանսիական կապերն ստանում են որոշակիորեն ընդգծված մշակութային ու գիտական ուղղվածութիւն ե հասնում իրենց բարձրակետին՝ որպէս ամբողջ նախորդ շրջանում առկա պատմական զարգացման արդյունք: Այդ կապերը լուսավորութիւն, դրականութիւն, արվեստի, մամուլի եւ այլ բնագավառներում լայնորեն ծավալվում են եւ իրենց հետքը թողնում հայ ազգային մշակութի ե հայոց լեզվի վրա:

К ВОПРОСУ О ВОЗНИКНОВЕНИИ И РАЗВИТИИ АРМЯНО-ФРАНЦУЗСКИХ ЛИНГВОКУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ (XI—XIX вв.).

А. К. БАРЛЕЗИЗЯН

Резюме

В статье выделяются три основных периода истории армяно-французских лингвокультурных связей: а) период киликийской государственности (XI—XIX вв.), б) постекликийский период развития (XV—XVIII вв.), в) XIX век и особенно его вторая половина. Интерес, проявленный французами к армянам, первоначально носил религиозно-политический и коммерческий характер. Но в дальнейшем история армянского народа, его литература, культура и язык все больше и больше привлекают внимание французских арменоведов. С основанием кафедры армянского языка в парижской высшей Школе восточных языков (1798 г.) арменистика приобретает официальный статус во Франции. XIX век знаменуется появлением целой плеяды французских арменоведов. Новый импульс арменоведческим исследованиям в Европе придают труды представителей армянской Конгрегации мхитаристов. В XIX веке составляются французско-армянские и армяно-французские большие словари, издаются богатая разнообразная литература.